դեկտ 6 էր։ Ի դէպ է յիշել, որ Բիլիջիկի մօտից կայ մի հին աւերց Հայոց գերեզմանատուն, որ կոչվում է «Փուղուս բուլաղ» (Պօղոսի աղբիւր)։ Հեռաւորութեան ժամանակի չնչելուն և սարսափելի ցեխերի պատճառով չկարողացանք գնալ։ Մի յարմար ժամանակ մտադիր ենք գնալու և դիտելու այդ գերեզմանատունը։ Այդ գերեզմանատան 3-500 տարուան արձանագրութիւնները վերցնելով, դուցէ կարողանանք պատմութեամբ հետաքրքրուողների համար օգտակար լինել . . . [1])

ՅԱՐ. ՄԱՐԱՂԵԱՆՑ

Յանկալով փոքր ինչ տեղեկութիւն տալ Զամախայ թեմի ժողովրդեան կրօնական զգայմանց վրայ, և գտնուած եկեղեցեաց, վանօրէից և ուխտատեղեաց դրութեան վրայ, գրեցի հետեւեալ ցուցակը և միւս տեղեկութիւնքն։

Միտք չունենալով ամբողջ թեմի քաղաքների և գիւղերի ստորագրութիւնը գրել, որ արդէն գրողներ եղել են, զօր լուսահոգի Սարգիս եպիսկոպոս Ջալալեանց (Հատ. Բ. յերես 389 ց431), Դանիէլ եպիսկոպոս Առաջնորդն Զամախայ (Արարատ ամսագիր 1870 և 1871) և մեր ժամանակը Մակար վարդապետն Բարխուդարեանց, մանաւանդ թէ բացի Բագու և Դարբանդ քաղաքներից, ոչ մի տեղում նշանաւոր ստորագրելու բան չկայ, այն է հին ազգային յիշատակարան՝ այլ միայն եկեղեցիքն են, որ մի օրինակ շինուածներ են այս և այն թուականներին, — նոյնպէս և նոր նշանաւոր բան չկայ, այն են, ինչ որ յիշեալ եպիսկոպոսքն գրել են 1850-55, և 1865 թուերին։

Այսպէս Զամախու թեմումն կան հետեւեալ վանքերն և ուխտատեղիքն։

1. Սաղիանի սուրբ Ստեփաննոսի վանք,
2. Մէյսարու սուրբ Աստուածածնի վանք,

---

[1]) Տապանագրերի մասին տես յերես 149 և 152։ Մ. Ե. Ս.